



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՇՎԱԾ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի և Մարինե Ֆարմանյանի,

հաշվի առնելով այն հանգամանքը, Պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 14³-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով Պալատի նախագահի որոշման հիման վրա ամենամյա անդամավճարից լրիվ մասով ազատվում է այն փաստաբանը, ով հանդիսանում է 2020 թվականին Արցախյան պատերազմում զինվորական ծառայության կամ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված (մահացած), անհետ կորած կամ գերեվարված զինծառայողի (կամավորի) ծնող, ամուսին կամ զավակ: Պալատի նախագահի որոշմամբ զիջվում (ներվում) է նաև սույն կետում նշված փաստաբանի անդամավճարի պարտքը՝ 2021 թվականի փետրվարի 03-ի դրությամբ:

նկատի ունենալով այն հանգամանքը, որ փաստաբաններ Խաչիկ Դանիելյանը, Մաի Հակոբյանը և Կարեն Լևոնյանը Արցախյան պատերազմում կորցրել են իրենց զավակներին և Փաստաբանների պալատն ի նշան իր երախտագիտության և ուշադրության նվազագույն քայլի անհրաժեշտ է համարում ամբողջ ժամանակահատվածով ազատել անդամավճարներ վճարելու պարտականությունից,

դեկավարվելով դեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.5 կետի, ինչպես նաև Կարգի 14³-րդ կետի պահանջներով, միաձայն

31 օգոստոսի 2021թ.
թիվ 13/11-Ա

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. 2020 թվականին Արցախյան պայերագմում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված զինծառայողների փաստաբան ծնողների նկատմամբ արտոնություն կիրառելու ժամանակահատված սահմանել վերջիններիս փաստաբանի կարգավիճակ ունենալու ամբողջ ժամանակահատվածը:

2. Սահմանել, որ սույն որոշումը տարածվում է փաստաբաններ Խաչիկ Դանիելյանի, Մաի Հակոբյանի և Կարեն Լևոնյանի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

31 օգոստոսի 2021թ.
թիվ 13/11-Ա
ք. Երևան